Չարենցավան համայնքի ղեկավար
պրն. Հ.Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հայտնում եմ Ձեզ, որ Եվրամիության «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Հայաստանի գրասենյակի կողմից կառավարվող «Համայնքային վերակերպումներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակում Չարենցավան համայնքում իրականացվում է «Չարենցավանի դիրքավորումը որպես տուրիստական ներուժ ունեցող համայնքի կենտրոն» ենթածրագիրը:

Ենթածրագրի հիմնական միջոցառումը Վերածնունդ հուշահամալիրի տարածքի բարեկարգումն է, ներառյալ՝ Գանգրահեր Տղայի արձանի և հարակից հարթակի վերանորոգումը, կանաչապատ գոտու ոռոգման համակարգի վերականգնումը:

Դրամաշնորհի ամբողջական գումարը կազմում է 27,048,692 (քսանյոթ միլիոն քառասունութ հազար վեց հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից վերոնշյալ միջոցառման համար հատկացված գումարը կազմում է 25,566,592 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ,

Շինարարական աշխատանքների իրականացման համար անմիջական դրամաշնորհառուի՝ Չարենցավանի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված մրցույթում ի հայտ է եկել հաղթող կազմակերպություն, որի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 27,089,677 (քսանյոթ միլիոն ութսունինը հազար վեց հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ, արդյունքում պակասում է 1,523,085 (մել միլիոն հինգգ հարյուր քսաներեք հազար ութսունհինգ) ՀՀ դրամ:

Միաժամանակ, տեխնիկական հսկողության գնման գործընթացում առաջարկված գինը՝ 330,000 ՀՀ դրամ է, իսկ առկա միջոցը՝ 474,700 ՀՀ դրամ, և ավելացել է 144,700 ՀՀ դրամ:

Սույնով խնդրում եմ Ձեր աջակցությունը՝ համայնքի բյուջեից Չարենցավանի «Մշակույթ» ՀՈԱԿ-ին հատկացնելու վերը նշված գործընթացների արդյունքում աշխատանքների իրականացման համար փաստացի պակասող 1,378,385 (մեկ միլիոն երեքհարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը:

Համայնքապետարանի զարգացման ծրագրերի
և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Ա. Ծերունյան

04 սեպտեմբերի 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «05» 09 2023թ.
Մուտք N 3857 Գործ N 04